

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Անունը ազգանունը**՝ Խաչատուր Խաչիկյան
2. **Զբաղեցրած պաշտոնը**՝ ՀՀ կառավարությանն ենթակա միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի (այսուհետ՝ կոմիտե) նախագահի պարտականությունները կատարող
3. **Գործուղման վայրը/ժամկետը**՝ Վաշինգտոն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ 2023 թ. մարտի 13-17
4. **Հրավիրող կողմը**՝ ԱՄՆ միջուկային կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ ՄԿՀ)
5. **Գործուղման նպատակը**՝ Մասնակցել ՄԿՀ-ի կողմից կազմակերպվող ամենամյա տեղեկատվական համաժողովին
6. **Քննարկված թեմաները**՝ Համաժողովի ընթացքում քննարկվել են կոմիտեի և ՄԿՀ միջև հետագա համագործակցության ուղղությունները:
7. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր**

Կայացել է հանդիպում ՄԿՀ-ի նախագահ Քրիստոֆեր Թ. Հանսոնի, համանախագահներ (կոմիսարներ) Ջեֆֆ Բարանի և Բրեդլի Քրոուելի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են համագործակցության ուղղությունները և առաջնահերթությունները՝

 - ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի կրկնակի երկարացման շրջանակում կոմիտե ներկայացվող անվտանգությունը հիմնավորող փաստաթղթերի դիտարկման, ստուգողական հաշվարկների իրականացման նպատակով (ջերմահիդրավիկ, սարքավորումների ամրության, մնացորդային գոյապաշարի, նեյտրոնաֆիզիկական) համակարգչային ծրագրային միջոցների հասանելիության ապահովումը և ՄԿՀ փորձի փոխանակումը;
 - Կոմիտեի և կոմիտեին գիտատեխնիկական աջակցություն տրամադրող «Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից նոր գործառույթների և նոր սարքավորումների լիցենզավորումը, ինչպես նաև մասնագետների պատրաստման և վերապատրաստման արագացված ծրագրերի մշակումը: Հայ մասնագետների ներգրավածության ընդլայնումը գիտական աշխատանքներում;
 - Աշխատած միջուկային վառելիքի չոր պահեստարանի շահագործման ժամկետի երկարացումը և ծերացման կառավարումը;
 - Ներկայացվեց նաև ՀՀ-ում ճառագայթային բժշկության բնագավառի զարգացման սպասվող հեռանկարները՝ ճառագայթային բժշկությունում օգտագործվող իոնացող ճառագայթային աղբյուրների փոխարինումը պրոտոն/իոն բժշկական արագացուցիչներով: Առաջարկվեց համագործակցել

արագացուցիչների կիրառմամբ գործունեության լիցենզավորման և կարգավորող վերահսկողության իրականացման փորձի փոխանակման ուղղությամբ;


- Ճառագայթային անվտանգության տեսակետից բժշկական նպատակներով արտադրվող ռադիոակտիվ իզոտոպների արտադրությունը կանոնակարգող նորմատիվ-իրավական դաշտի և կարգավորող վերահսկողության իրականացման առանձնահատկությունները;
- Գիտելիքահենք տնտեսություն ձևավորելու նպատակով ՀՀ հետաքրքրված է հետազոտական և փորձարարական միջուկային տեղակայանքի կառուցման, դրա լիցենզավորման և կարգավորող վերահսկողության գործընթացներով: ՄԿՀ-ի կողմից առաջարկվեց համագործակցության շրջանակում կազմակերպել ճանաչողական այց ԱՄՆ-ում գործող նմանատիպ տեղակայանք;
- ՀՀ-ում նոր միջուկային բլոկի կառուցման ենթատեքստում իրականացնել փոքոր մոդուլյար ռեակտորներին (այսուհետ՝ ՓՄՌ) վերաբերող նորմատիվ-իրավական կարգավորումների, անվտանգության գնահատման, լիցենզավորման առանձնահատկությունների վերաբերյալ ՄԿՀ փորձի փոխանակում: Աջակցել ՀՀ-ում ՓՄՌ ատոմային էլեկտրակայանի կառուցման տեխնիկա-տնտեսական հիմնավորման աշխատանքների կազմակերպման հմ կողմից ելույթ չի ներկայացվել:


8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման ընթացքում ստորագրվել է «ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջուկային կարգավորող հանձնաժողովի միջև՝ միջուկային անվտանգության հարցերով տեխնիկական տեղեկատվության փոխանակման և համագործակցության մասին» համաձայնագիրը, ինչպես նաև վերոնշյալ համաձայնագրի շրջանակում համակարգչային ծրագրային միջոցների օգտագործման և սպասարկման իրականացման ենթահամաձայնագիրը (IMPLEMENTING AGREEMENT BETWEEN THE UNITED STATES NUCLEAR REGULATORY COMMISSION AND THE STATE COMMITTEE UNDER THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA ON NUCLEAR SAFETY REGULATION RELATING TO PARTICIPATION IN THE THERMAL-HYDRAULIC CODE APPLICATIONS AND MAINTENANCE PROGRAM):

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Վերոնշյալ ուղղություններով ակտիվացնել համագործակցությունը ԱՄՆ ՄԿԸ-ի հետ:

 Recoverable Signature

X 

ԽԱՉԱՏՈՒՐ ԽԱՉԻԿՅԱՆ

Signed by: KHACHIKYAN KHACHATUR 3309700070

Խաչատուր Խաչիկյան

22/03/2023թ.